

ԳՆՈՒՄ ԵՍ ԸՆԴԱՌԱՋ ԵՐԿՆՔԻՆ*

«Սիրտս ջրիոր է, դատարկ-լքված ջրիոր, և իմ աշխարհն է այնտեղ թաղված», բառաշեն իմ աշխարհի՝ դու ու նաև այդ աշխարհի վրա աստ-դադիտակի պես նայող եզակի աչքը այն ծովահենի, որով փրկիչն էր նայել քեզ մի օր - եկեղեցու բակում, այդ վայրկյանից սկսյալ հոգիդ ասաջևորդելով խնացության այն արգելված ձա-նապարհով, որից հետո աննշմարելիորեն փոքր երկիրը այս ընկալվում է որպես ողբերգություն-ների տուն, իր ընդերքում դրված բազում դաշույն-ներով, որից հետո այնտեղից դուրս փախչելը դառնում է հանձարեղ հոգու կամ հոգու հանձա-րի միակ սևնումը: Դու ճիշտ ես: Փրկվում են միայն այն հոգիները, որոնք փրկվել գիտեն, և բարձրանում են սիսա, դեն նետած մարմնիդ ու երկիրը՝ ցավեցնող կոշիկների պես, այլևս եր-բեք չհազնելու վճռականությամբ: Ասենք գեղե-ցիկ է... հետո՞ ինչ: Անբարո կնոջ գեղեցկության նման այն կրկն չդարձավ քոնը, չմտերմացավ երբեք, չեղավ այն, ինչ խոստացված էր գեղեց-կությամբ, այլ ներքաշնց ճղճիմ խաղերի ու խար-դավանքների մեջ, ցավեցրեց... միայն ցավեցրեց ու հիմա ծովափին խաղացող քմահաճ մանկան պես մի շարժումով բանդում ես ավազից պատ-րաստված հերթական տաճարը բո ու հեռանում, ասես մայրդ է կանչում, ու մթնում է, հետևում թողնելով մի փրուզված քաղաքակրթության ավե-րակ, հոգուդ անափության չափով անդունդ մի, որը ոչնչով հնարավոր չէ լցնել, բացի ունեցից - երևի թե: Գնում ես՝ երկրին ժառանգելով վիրա-

վոր կաղապարը մարմնիդ՝ որպես վկայությունը բո համառոտ այցելության ու բո կռվի՝ ընդդեմ երեք անմահների. մահվան, տարածության ու ժամանակի: Կռվի, որի արդյունքները կամփոփ-վին ավելի ուշ, երբ երկրային դատավորները կվանան իրենց ձեռքերը և կհակվեն բառիդ վրա, ինչպես միակ շոշափելի ամուր ճշմարտու-թյուն, որի շուրջ Տերը գրոյից կասուցել էր աշ-խարհը այս - շատ-շատ ասաջ. վստահ եմ, կսկսի այդ հաշվարկը, երբ նրանք հանդիպեն քեզ գնալուցդ հետո՝ անապատի սփռումներում համայն արարչության: Ես այդ մասին տեղյակ եմ արդևս, որովհետև մահվանդ լուրը ինձ հա-սավ, երբ մեքենայի մեջ էի դեպի ծովափ, ու հենց նույն պահից սկսյալ դու էիր ձանապարհը և դեկր, անձանոթ պատուհաններից ինձ նայող մարդիկ բոլոր ու լսալուսները երկնից կախված: Դու էիր, ու վերջ. ես այդքան շատ սխալվել չեմ կարող: Վերձիդ ու ինքնավստահ, ինչպես Աստ-ծո ձեռքով արձակված հրթիռ՝ իր կոնկրետ նշա-նակետով ու այցևտումսով դեպի այնտեղ, որտեղ Տերը հենց հիմա էլ սպասում է քեզ ժամացու-ցին նայելով, ետ ու առաջ անելով, ինչպես սի-րելիին սպասող սիրահար: Հստակ տեսնում եմ ու գիտեմ նաև արդևս, որ վաղուց միմյանց կորց-րած երկվորյակների նման միանգամից եր ձա-նաչելու իրար, փաթաթվելու-տարտատվելու կը լուս իրար ուսի վրա: Լուս, բայց ոչ այնպես, կարծես ինչ կյանք չկա, կամ էլ ներթադրությունը գոնև մեկ այլ կյանքի: Սա հենց այն պահն է լինելու,

* Այս խոսքը նախատեսված էր բանաստեղծի շիրիմի մոտ ընթերցվելու համար, որը, ցավոք, չիրագործվեց: Այն ստագրվել է «Գրական թերթի» փետրվարի 22-ի համարում:

որի մեջ զգալու ես «քեզ հանձարեղ հարցեր տվողի ու լսողի», իմ բացակայությունը, որով-հետև, ինչպես գիտես, ի տարբերություն ինձ, Աստված հարցեր չունի: Ճիշտ քեզ նման: Նա ամեն բան գիտի, ներառյալ այն, որ ինքը գիտի, որ գիտի, ճիշտ՝ ինչպես դու: Ինչ կա որ: Մի քիչ

փորձել էր հազար անգամ, ինչպես Հոբին: Ռ՛մ, եթե ոչ քեզ էր կանչելու հաշվետվության, խան-դոտ սիրեցյալի վրեժխնդրությամբ արարչությունը մազ սո՝ մազ դասդասածիդ, տինգևրքի անպա-րագիժ գեղեցկության վրա մահվան չափ սևեռ-վածիդ, որ վաղուց ի վեր փախստատ է փնտրում

էլ ցինիկանամ: Ո՛ր մնաց խոստումի մեր հոգի-
ների համարայլ ճանապարհի: Քնզ եմ հարց-
եում: Ո՛ր: Դե լս՛վ - անցանք: Ճիշտ է, ես թեզ
չեմ հանդիպել եկեղեցու բակում, բայց փրկչի
պես կախ էր մի կուպղ, ու պարզ հանդերձիդ ան-
փույթ օձիքի տակից երևում էր հեամաշ սամույ-
րը արքայաց-արքաների ու նաև թիկնոցի ծիրա-
նին իմաստունի: Իսկ քաթանե շապիկիդ մասին
ես իմացա ավելի ուշ, բանգի ձուլվել, կոյնացել
էր մաշկիդ հետ, ինչպես բառը, որով կատարե-
ցիր քո երկրային հրաշքները, բուժեցիր հոգիներ-
ըր բորոտավոր, կոր տեսողություն ու անթաղու-
թյուն ընծայեցիր անհավատներին ու կոյրերին,
տողդ հենարան դարձրիր թոյլ ու կաղերի հա-
մար, թեկուզ այն չէր տրվել քեզ ի վերոստ մի-
այն, այլ վաստակել էիր նաև քրտիկերով, վաստ-
կումով ու անկողնությամբ: Նաև բարեհոգի եղար:
Տեսար քրտնաթոր տողիդ արծարծումը ուրիշնե-
րի երգերի ու գործերի մեջ ու չղաճնացար, կա-
րեկցանքդ անկողնի, փոխարենը, արդարացրիր
խնկահիպացումի՝ այն խառնելով տիեզերահիպա-
ցումիդ հետ ու վերածվեցիր Աստուծո հոլորամի,
կրա վիրտուսայ ու բացարձակ անտարբերու-
թյամբ ու կոյրան բացարձակ շահագրգռվածու-
թյամբ՝ հանդեպ երկիրն ու երկիրը, մարդն ու
անհունը: Քանի՞ դար է անցնելու, մինչև կորից
վերադառնա բառի ինքնաստեղծ ու ինքնարավ
հանձարով օժտված մեղսակիցն ու հանցակիցը,
պոետն ու մարգարեն, հեղվող ինտելլեկտի և
ներհայեցումի այդ բացարձակ չափի կրողը, այդ
հայտնատես սչքը, որ ի գորու է շարժվել տիե-
զերի շառաչող գեղերից մինչև սիզախտոր կա-
նաչ և մնալ ճշգրիտ, և մնալ կարեկից: Երբ է
կրկնվելու բացարձակ չափերի այս էտալոնը,
որի վրա Տերը ճշտում է իրեն - ամեն օր: Եվ ո՛ւմ,
եթե ոչ հենց թեզ էր Տերը դուրս բաշելու այս
մորթատեղի դարձած երկրից, կրան, ում արդեն

իր իմացածից, որի մեծ մասը ի դեպ՝ Աստուծո
իմանալիքն էր սուտ: Նոր աշխարհ տեսնելու
մանկան ուզելուցամբ ես գեում, բանգի մանց
միշտ էլ եղել է քո հաշվարկում, քանգի գիտեիր,
որ Տերը նկատել է քեզ: Գեում ես այնտեղ, որ-
տեղից եկել ես, ինչպես արջիկը՝ հայրական
տուն, երկրին ժառանգելով պանդխտության ժա-
մանակը, կյանքիդ ժամանակը, որը տնօրինել
սյրպես էլ չստացվեց: Գեում ես ընդատաց
երկերին այս, որը թեզ տեսիլվում է ավելի գեղե-
ցիկ, քան կնոց իրանը, զավի ու խարդավանքի
գործիքը այդ, հեանիցը բաշկով տողը, միակ
հավատարմիդ, որով սահմանեցիր անսահմանը,
թռչելու դասեր տվեցիր անթևներին անգամ: Մի
խոսքով, հեացիր կյանքդ հալածված եղևիկի
պես ու... գեում ես: Հորիզոնի կապույտի վրա
տեսիլվում է հոգուդ շարժման կորագիծը՝
ճշգրիտ, ինչպես հանձարեղ նկարչի գիծ: Քիչ
մնաց, ու կերևա շոտով վեհ, երկնային գահը
այն բոցեղեն, որի մասին ես չեմ, որ պիտի պատ-
մեմ թեզ: Դեմ, ու հոգ չեմ, թե որտեղ վար կեն-
տես կաղապարդ, սիրելի հանձարների մոտ, թե
սիրած կնոջ: Թող փոքրերը մոտածեն դրա մա-
սին:

Յնխն էլ օձյալ է, եթե կրա մեջ սուրբ է ըն-
կած:

Դե գեամ... չուշացնեմ քեզ:

Հ.Գ. Խոնարհվում, համբուրում եմ ձեզատղ
հսկայական: Ներիր, եթե թերացել եմ ինչ-որ
տեղ, ներիր՝ չգիտեմ: Ինչ լս՛վ է, որ հանդիպե-
ցիք:

19 փետրվարի 2013 թ.